

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

8.05.2014

Հարգելի հայրենակիցներ

Մեզ պարտադրված Արցախյան գոյամարտի առաջին հայ զինվորները երկրապահ կամավորները եղան, ովքեր հերոսական ջանքերով ու կյանքի գնով հետ շարտեցին Հայոց հայրենիքը նորից բնաջնջելու եկած մահացու թշնամուն: Նրանց տոկունության, արիության ու հայրենասիրության շուրջ խմբվեց հայ ժողովուրդը՝ կազմավորելով փառահեղ հաղթանակների միջով անցած Հայոց անպարտ բանակը: Նահատակ երկրապահներն իրենց սուրբ անուններով ու գործերով հավերժ տպավորվեցին մեր ժողովրդի հիշողության մեջ, իսկ ողջերը դեռ շարունակում են մնալ բանակաշինության ակունքներում, Հայկական բանակի շարքերում՝ իրենց ներկայությամբ գոտեպնդելով նորակոչիկ զինվորներին, ռազմահայրենասիրական ոգի հաղորդելով մատաղ սերնդին:

Երկրապահի օրվա կապակցությամբ շնորհավորում եմ Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի հայությանը, մաղթում բոլորին խաղաղ ու հզոր հայրենիք, երջանիկ ու անհոգ տարիներ: Թող հայ Երկրապահների կերտած հաղթանակներն ու խաղաղությունը մնան մեր ժողովրդի պատմության հավերժական ուղեկիցները:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ

Ռաֆիկ Գրիգորյան